

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Կ. Գրիգորյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյանի

ՀՀ Արմավիրի մարզի զինկոմիսար

Ա. Համբարձումյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի զինկոմիսարի հաշվետվությունը:

/Ա. Համբարձումյան- ՀՀ Արմավիրի մարզի զինկոմ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 15.09.2019 թ. դրությամբ:

/Վ. Մկրտչյան- ՀՀ արմավիրի մարզպետարանի
ֆինանսական և
սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թ գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Արամ Հովհաննիսյանին՝ նրան մաղթելով բեղմնավոր աշխատանքային գործունեություն՝ միաժամանակ նշելով, որ պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում արդեն հասցրել են արդյունավետ փոխհամագործակցված աշխատել: ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության նորանշանակ պետ Ա.Հովհաննիսյանը հանդես գալով ողջույնի խոսքով՝ նշեց, որ իրականացվել են մի շարք կադրային փոփոխություններ և նշանակումներ, ներկայացնելով ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի, Վաղարշապատի, Մեծամորի և Բաղրամյանի փարածքային բաժնի պետերին փաստեց, որ պատրաստ են մշտապես համագործակցելու և սերտ աշխատանքներ իրականացնելու և համայնքների ղեկավարների և բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի անդամներին ներկայացրեց նաև հունիսի 9-ին մարզի Վարդանաշեն, Ապագա և Նորակերտ համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում հաղթող ճանաչված համայնքապետերին՝ շնորհավորելով և բարեմաղթանքներ հղելով նրանց: Անդրադառնալով վերջին մեկ տարվա ընթացքում մարզում տեղի ունեցած ԱԺ և ՏԻՄ ընտրություններին՝ մարզպետը փաստեց, որ բոլոր ընտրությունները կայացել են օրենսդրությանը համապատասխան և որևէ բողոք չի գրանցվել: Այդ գործընթացում նա բարձր գնահատեց ոստիկանության դերակատարումը և հորդորեց նույն գործելաոճը որդեգրել նաև սեպտեմբերի 29-ին մարզում նախատեսված ՏԻՄ ընտրություններում: Նա նշեց, որ նախատեսվող ընտրություններն արտացոլելու են համայնքների բնակիչների ընդհանուր կամքը և արդարացնելու են նրանց սպասումները: Մարզպետն անթույլատրելի համարեց վարչական լծակների կիրառումը, մասնավորապես՝ դպրոցների տնօրենների, կառավարման խորհուրդների և համայնքային ենթակայությանը գործող կառույցների վրա ճնշումների գործադրումը:

Օրակարգային <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին>> առաջին հարցով Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ հարցով՝ հաշվետվությամբ՝ /կցվում է/ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզի փարածքային զինկոմիսար Ա. Համբարձումյանը: Նա մասնավորապես անդրադարձավ սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 3-ը ՀՀ զինված ուժերի ուսումնական տարվա պլանով նախատեսված ռազմավարական

գորավարժությունների անցկացմանը: Ա.Համբարձումյանը ներկայացրեց դրանց նախապատրաստմանն ու անցկացմանն առնչվող գործողություններն ու գործառույթները:

Ձորավարժությունների անցկացումը բարդ և պատասխանատու գործընթաց է, որը պետք իրականացվի ամենայն պատասխանատվությամբ նշեց Ա.Համբարձումյանը:

Օրակարգային երրորդ՝ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը համապատասխան տեղեկատվությամբ /կցվում է/ ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրմանն ու աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 15.09.2019թ. դրությամբ:

Նա մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել է 1.647290,6 հազար դրամ, կատարողականը՝ տարեկան 3.135415,1 հազ.դրամ պլանի նկատմամբ եղել է 52,5%: Ըստ նրա՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2018 թվականի նույն ժամանակահատվածում հավաքագրված 1.411929.2 հազար դրամի համեմատությամբ աճել է 235361,0 դրամով կամ 4,6 տոկոսով: Վ.Մկրտչյանը ներկայացրեց 30 տոկոսից ցածր սեփական եկամուտների հավաքագրում ապահովված համայնքների, ինչպես նաև առավել բարձր ցուցանիշների հավաքագրում ապահովված համայնքների ցանկերը:

Վ.Մկրտչյանը ներկայացրեց նաև համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը՝ տեղեկացնելով, որ սեպտեմբերի 15-ի դրությամբ աշխատավարձի պարտք ունի թվով 13 համայնք:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին՝ ողջունեց մի շարք համայնքներում որոշ հարկատեսակների մասով գրանցված հավաքագրումների աճը՝ համայնքների ղեկավարներին հորդորելով պահպանել այդ միտումը՝ խիստ կարևորելով սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավումը և աշխատավարձերի պարտքերի մարումը: Նա նշեց, որ անհրաժեշտ է ակտիվ և բացառական աշխատանքներ իրականացնել ազգաբնակչության շրջանում և հնարավորինս կարճ ժամանակահատվածում բարելավել հավաքագրումների մակարդակը, քանի որ միայն այդ պարագայում է հնարավոր համայնքներում առաջնային համարվող խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը անընդունելի համարելով սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշները, համայնքների ղեկավարներին առաջարկեց ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին և ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք առավելագույնի հասցնելու, ինչպես նաև աշխատավարձերի պարտքերը մարելու համար, հանձնարարելով ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին և մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին իրականացնել ամենօրյա աշխատանքներ վերը նշված խնդիրների կարգավորման և լուծման համար:

Օրակարգային չորրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019թ գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը: Մարզպետը ներկայացնելով իր 2019 թվականի գործունեության հիմնական ցուցանիշները և մարզի սոցիալ-տնտեսական վիճակը, նշեց, որ հաշվետու տարում մարզում իրականացվել է շուրջ 100 ծրագիր, այդ թվում՝ 21 հրատարակ լուծում պահանջող և 37 սուբվենցիոն: Նա փաստեց, որ եթե որոշ համայնքապետեր և համայնքային ծառայողներ առավել սրտացավ և պատասխանատու կերպով իրականացնեին իրենց վերապահված գործառույթները, մարզում կարող էր իրականացվել առավել մեծ թվով հրատարակ լուծում պահանջող և սուբվենցիոն ծրագրեր:

Անդրադառնալով ճանապարհաշինության ոլորտի ծրագրերին՝ մարզպետ Հ.Մաթևոսյանն ընդձեռնեց, որ հաշվետու տարում մարզում իրականացվում են ճանապարհաշինարարական աշխատանքներ՝ հիմնանորոգում, վերանորոգում և մասնակի վերանորոգում:

Անդրադառնալով կրթության ոլորտին՝ մարզպետը ներկայացրեց 5 դպրոցի կառուցմանը, 5-ի գազաֆիկացման և լոկալ ջեռուցման համակարգով ապահովմանը, 1 դպրոցի հիմնանորոգմանը և մեկ դպրոցի մարզադահլիճի վնասված տանիքի վերանորոգմանն ուղղված ծրագրերը: Մարզպետը կրթության ոլորտի կարևոր ձեռքբերում համարեց նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների թվի ավելացումն ու մի շարք դպրոցներում խնայած միջոցներով և բարերարների օգնությամբ իրականացվող ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

Ներկայացնելով գյուղատնտեսության ոլորտում արձանագրված ցուցանիշները մարզպետն ընդձեռնեց, որ 2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին մարզում կրկնապատկվել են հակակարկրային ցանցապատ տարածքները, ջերմոցները և ջերմարները. կաթիլային ոռոգվող հողատարածքները և սառնարանային տնտեսությունները: Նա հավելեց նաև, որ այժմ աշխատանքներ են տարվում ներդրողների հետ՝ մարզում ինտենսիվ այգիներ և սառնարանային տնտեսություններ հիմնելու ուղղությամբ: Ամփոփելով իր ելույթը ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը նշեց, որ մարզում նախատեսվում են բնակարանաշինության, գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային, նախակրթարանների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների թվի ընդլայնմանն ուղղված ծրագրեր ինչպես նաև առողջապահության ոլորտում նախատեսվող բարեփոխումներ:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10/31/2019



VERIFIED OCSP 10/31/2019 11:21:05 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230